ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/20011-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ ԱԺ-ում առաջին ընթերցմամբ ընդունված «Հանրակրթության մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-814-03.04.2024-ԳԿ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

Առաջարկում ենք հետևյալը՝

1. Նախագծի 1-ին հոդվածում «Հանրակրթության մասին» օրենքի ընդունման ամսաթվում առկա վրիպակը ուղղել՝ «23» թիվը փոխարինելով է «10» թվով և «16.1-րդ» գրելաձևը փոխարինվել է «16.1-ին» գրելաձևով՝ պահպանելով դասական թվականների ճիշտ գրելաձևը,
2. Նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրը հանվել է՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»,
3. Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «այլ իրավական ակտերն ընդունվում են» ձեևակերպումը փոխարինվել է «այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են» ձեևակերպմամբ՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը, որը սահմանում է.

«օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը»:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ